

ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի և տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի կարագրատան մը:

(Պատրաստագրացի գինում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Կայքի կիրակի և առիթներին):

Հայաստանում ընդունվում է ամեն լիցենզիա:

Հայաստանում ընդունվում է համար վճարում են
Խմբագրատնի բառեր 2 կոպեկ:

ՄԵԼԿ

ԲՈՎԱՆԴԱԿԱՆԻԹԻՆ

Ով է մեղադրում—նրա քին տեսնելի են
նրա մեղքը—նրանով Գեորգիյան, Ներսիսյան
յուրերը—Արտաքին տեսնելի են, Թիֆլիսյան
(Վաղյան) Թագուհու գահական ճառար—«Մը»
չ կին հեռագրիները — Պայտարարություններ—
նրա ապրիլի կան, խնամքը:

ՈՎ Ե ՄԵԼԱՌՈՐ

Գրաւոր հարգողացողութիւնները
և տպագրութեան միջոցները այն-
չայն հեշտացել են, այնչափ տա-
րածվել մեր ժամանակը, որ ան-
հերքելի իրողութիւն է ժողովրդի
կեանքը, կարիքը ու դրութիւնը
ճշգրի խմանալու համար, հարկա-
ւոր է գիտել միայն լրագրիներին,
այլ ոչ թէ հեռու աշխարհից և-
կող երկրում կրկնող կուռնիսնե-
րին:

Բայց աշխարհը փոխում է,
աղբերի վարքը նոյնպէս, իսկ հա-
յերի սովորութիւնը մնում է նոյ-
նը: Օտարացած է հայը թէ խա-
ւար, գիտէ կարգալ թէ ոչ, ու-
սումնական է թէ տգէտ, գար-
ձեալ պապերի ինստիտուտը նորա
մէջ մնացել է անփոփոխ: Հայը
միշտ աւելի է տրամադրված հա-
ւատալ հեռատանից եկած մի
ինքնակոչ վարդապետին, մի խա-
չագողին, նա աւելի հեշտութեամբ

բաց կանէ իր քսակը մի թուից
փախած քարոզչի խօսքից չարժ-
ված, քան թէ եմթարկելով հէջ
առաջի հայ լրագրի և նորա ըս-
տացած բոլոր թղթականութիւն-
ների աղբեցութեան:

Ինչ է առաջանում այս բանից.
Օգլթունը տարիներով պատե-
րազմում է տաճկաց գէմ, վատ-
նում է իր վերջի գնտակը, և վառ-
դի վերջի հատիկը, մնում է ա-
ռանց գէնքի ու հացի պաշարի,
բայց դարձեալ արին է թափում,
լրագրիները անդադար խօսում են,
դրամական օգնութեան հրաւի-
րում ազդի անդամներին, բայց ոչ
որ չէ լսում ոչ որ չէ հետաքրքիր
թէ մի բուռ իր քաջամարտիկ ա-
րիւնակիցների ազատութիւնը մա-
հից վեր է դառում: Մինչդեռ
նոյն գէլթունցիների անունով գա-
լիս է մի կեղծ պատգամաւոր, մի
պոռոտախօս վեղարաւոր, իսկոյն
վարում են ամեն կողմից նորա
մօտ և թափում են իրանց նուէր-
ները նորա փեշը: Օգլթուն տա-
ն է և լուս համար: Շարդիկ վեղա-
րակիրը լցնում է գրպանները և
անհետանում այնտեղ որտեղից
կուռնիսներն էլ չեն կարող լուր
բերել...

մտաբաններով: Խիթանց վանքի պարսիկ
չորհրդ և ներք, Ներսիսի լծի չղակայ ծառերի
հովանու տակ, մինչև Գայիանի փանջը, մինչև
նոյն կաթոլիկոսի տնկարկած անտառի վերջը,
որ կար մի կտոր սուտեր, որ կարող էր պահապ-
անել արևի կիզող ճառագայթներից,—ամեն տեղ
կարելի էր տեսնել նոյն թիւաւ և որորմելի բազ-
մաթիւնը: Իրանք աշակերտացի գաղթականներն
էին:

Երեք հազար ընտանիք, թողնելով իրանց հայ-
րենիքը, թողնելով իրանց տունը, տեղը և բոլոր
նպատակները, թուրքի սրից և կրակից ազա-
վելու համար փախել, ապաստան էին ցտիկ այս-
տեղ: Վարդապետում չէր կար մի տուն, ուր 10
—20 ընտանիք այդ թուրքախնդրի միմեկաց վրա
ածված չէ լինելին: Անաստանների արտաձերձը, մա-
րգիները և բակերը լինէին նրանցով: Բաւական
չէր, որ պէտք էր կերակրել այդ ահաբեկ բազ-
մաթիւնը, այլ պէտք էր և դարմանել և բժշկել
նրանց: Թողնելով Աշակերտի հովատուն ընտա-
նաւոր համար, Աշակերտաւոր ժողովուրդը յաւիտի դը-
ժակային տոթերի ժամանակ յանկարծ ընկել էր Ա-
րարատի մէջ, երկարվելով գահազան տեսնել հի-
ւանդութիւններին:

Վէտր էր, ամառային միջերկրի այն ժամը, երբ
գիւղացու աշխատութիւնը դադարում է դաշտե-
րում, մշակ մարդը և երկրագործական անասուն-
ները քաղվում են մի հովանաւոր տեղ հանգստե-
անալու համար: Աշկի բարձրաւոր արարածները ա-
ռան ճաշից քնած քնած են լինում իրանց իրիկի
աննախնորմ, Ուրալ այդ ժամին, բազմաթիւ ա-
րաւիկայից աղքատների թուում, որ գտնից դուռ բե-
կած մուրաբանութիւն էին անում, իր վրա ա-
ռանձին ուշադրութիւն էր գործնում առաւելա-

Այսօր տաճկահայերի մէջ մի
ուրիշ շարժում է յայտնվում, որի
յաջող վախճանից կախված է
ազդի ընդհանուր բարօրութիւնը.
լրագրիները դա հէա են տանում,
խօսում են ու խօսում, բայց մի
մարդ չէր կայ որ ուշադիր լինի:
Հանկարծ դուռն է գալիս մի
ճարտարախօս վարդապետ և եկե-
ղեցու բեմը բարձրանալով, սկսում
է քարոզ խօսել. «վա՛ն բացական-
չում են ամեն կողմից, լսի՛՛թէ
հայոց ազգը որ և է մի բանի
կարօտութիւն է գգում, ո՛ր, ինչ-
պէս կը լինի, մի՛թէ մենք հայեր
չենք, ո՛չ պարտաւոր ենք ան-
պատճառ օգնելու և այլն:» Այս-
պիսով կը տեսնէք որ բիշ ժա-
մանակվայ միջոցին վարդապետը
տանանակ հաղարները ծոցը դրած
անյայտացաւ էլն այն աշխարհը,
որտեղից կուռնիսներն էլ չեն կա-
րող խաբար բերել...

Վերջապէս վրա է հասնում
ազգին այնպիսի մի աղետ, որ
անկարելի է լինում լրագրիների
հրաւերներին ականջը խցել և մի
քանիսները սկսում են համոզվել,
որ լրագրիների միջոցով ուղարկած
փողերը չեն յիշվում լոկ ժապա-
ւիւնած գրքերի էջերում, այլ ամե-

նախտահ և աշխարայ ճանապար-
հով անմիջապէս հասնում են հար-
կաւոր կէտերը: Վանտոյոյ բացի
սուրը հայերին իրանց փողերը
բաժանելուց, մի քանիսները խոմ-
բազրութիւններն էլ են նուէր-
ներ ուղարկում զանազան տեղեր
հասցնելու համար: Բայց խմբագրու-
թիւնները բաւական չեն համա-
րում ստացած նուէրները. հրա-
ւիրում են ամենքին ուժերը բազ-
մապատկել, ջանքերը մեծացնել
ընկերութիւններ և մասնաժողով-
ներ կազմել օգնութեան համար,
մէկ էլ տեսար մարդիկ նեղացան
այդ հրաւերներին, ասելով «հէր
որհնած, էլ քանի մէկին տանք,
ո՛չ փող մնաց մեզ մօտ, ո՛չ հաց,
բոլորը սորա, նորա բաժանեցինք,
ուղարկեցինք Լճմիւսին, տուանք
այս ինչ վարդապետին, այն ինչ
պատուիրակին, բայց դուք էլի
մեզից ձեռք չէք քաշում...»

Հարց ենք առաջարկում ո՞վ է
մեղաւոր, որ ամեն հասնողին բա-
ժանում են իրանց փողերը, ամեն
հասնողին ազգի պատուիրակ են
ընդունում, ջերբեր լցնում, իսկ ք-
րագրիներին ամենքից վերջը լսում:
Ո՞վ է մեղաւոր, որ սուրը հայերին
արդէն տուած հարկեր հաղարները

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՄԹՈՐԻՍԿԱՆ
ՊԱՏԵՐԱԿԱՆ ԶԱՆԱՍԿԱՆՈՒՄ

ԼԷ:

Յուլիսի արեգակը ստաթիկ աչքում էր. կարծես,
միջնորդի անդրժ արարածութիւնը լցված լինէր
հեղին աւելիներով, որոնք կայծերի փոշու նման
չողոցում էին, կիզում էին և մեղմ ալիքներով
սփռվում էին զեպի ամեն կողմ: Տօթը անասանի
էր: Թուռները յոգած, թուլացած, ծածկվել
էին ծառերի թաւառներում, որոնց վրա մի տեղի
անգամ չէր շարժվում մեռած քամուց: Միայն
ճանձները, մոռանիները և մանր միկրոսկոպական
մեծիկները անամոթաբար ասպարէզ էին մտել, և
միլիոնաւոր խումբերով վաճվում էին, ձգվում
էին, չնչաւորութեան նման մնում էին մարդու յե-
րանք, փիթը, ականջները, կամ իրանց թուաւոր
խալթիցներով աւելի էին աչքում մարդու մարմնի
բաց տեղերը, քան թէ արեգակի հրեղէն ճառա-
գայթակերը:

Երեւոյի վաղարշապատը այդ ժամանակ ներ-
կայացնում էր մի տարրերի տեսարան:

Որ կողմ է նայում էիր, ամեն տեղ արեւոյից
էր մի տարաբանի բազմութիւն: Կին և աղջիկ,
ծեր և երեխայ,—բոլորը կիսամերկ, բոլորը աղ-
քաւ,—թափված էին այնտեղ, փողոցները լի էր

բիշ: Երկար նա գնում էր, և զուրկ ծածկ լուռ
ու մտնո՞ր կանգնում էր տեղերի գոնիկ մօտ, և
առանց համարակալելու ներս մտնել, ժամերով
սպասում էր, մինչև տանջելիների մէջը նրա վրա
ուշադրութիւն կը դարձնէր և մի կտոր հաց կը
տար: Երեսում էր, որ նրա հպարտ չրթուքը չէին
սովորած որորմութիւն ինդրելու, երեսում էր, որ
նա սովել և մեծացել էր աւելի բարբախտ վի-
ճակի մէջ, իսկ այժմ տխուր հանգամանքների
պատճառով ընկած էր մի տարրերակի կեանքի
մէջ, ինչպէս անձամբութիւնը, սեղանակա ար-
ժանաւորութեան վրաւորանքը, վաղեմի փառքի
կրօնաւոր, բարոյական տանջանքը,—բոլորը միա-
խառնվելով, լցրել էին նրա սիրտը անկարագործի
դառնութեամբ, որ աւելի էր մալում և արդում
նրան, քան թէ այն ցաւը, որ արդէն ունի էր
պայման նրա մարմնը:

Նա գիւռ անցնում էր մի դռնից միւս դուռը, բայց
նրա վրա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում:
Վերջապէս նա զգալով իր անթիւանութիւնը,
ուրաք ներս դրեց մի տան չեմից, և հանդիպելով
տանտիրանի, երկուսը ձայնով ասաց.

—Մի կտոր հաց...

Այդ ձայնի մէջ կային բոլոր նշխարները, որ
արտայայտում էին վրախի սրտի դուռն և ցաւալի
զգայմունքները:

Տանտիրան կուրծք ձայնով պատասխանեց.

—Կտորե՛ք դուք, որ մէկից տանք...

Աղջիկը նայեց իր չուրից, տեսաւ, իրաւ, իր նը-
ժան շատերը լցված էին այնտեղ: Նա պարտաւոր
էր ինչպէս հեռանալ, բայց նրան պահել էր միտքը:
Նա իր մասին չէր մտածում, թէ ինչ քաջած էր,
բայց մտածում էր այն երկու փողոցի երեխաների
վրա, որ տյնի չէին կերել, մտածում էր նը-

